ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/15/2021

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 2 սեպտեմբերի 2021թ.

ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Ա. Փաշինյանի, Լ. Ալեքսանյանի, Ն. Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի սեպտեմբերի 2-ին, քննելով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի նախկին քննիչ Թաթուլ Հրանտի Գրիգորյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի տարեկան հայտարարագիրը չներկայացնելու և 2020 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու փաստերի առթիվ 2021 թվականի օգոստոսի 10-ին հարուցված թիվ ՎԻՎ/15/21 վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով, պարզել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի նախկին քննիչ Թաթուլ Հրանտի Գրիգորյանի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի տարեկան հայտարարագիրը և 2020 թվականի պաշտոնեական պարտականությունները

դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չեն:

1.2 Թաթուլ Գրիգորյանի պաշտոնեական պարտականությունները դադարեցվել են 2020 թվականի հուլիսի 09-ին:

1.3 Հանձնաժողովի կողմից 2021 թվականի փետրվարի 04-ին և փետրվարի 24-ին Թաթուլ Գրիգորյանին գրավոր ծանուցումներ են ուղարկվել 2019 թվականի տարեկան և 2020 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագրերը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել համապատասխան հայտարարագրերը: Նշված ծանուցումները Թաթուլ Գրիգորյանի կողմից ստացվել են 2021 թվականի փետրվարի 05-ին և մարտի 02-ին: Սակայն, ծանուցումները ստանալուց հետո 30 օրվա ընթացքում համապատասխան հայտարարագրերը չեն ներկայացվել:

1.4 Հանձնաժողովի՝ 2021 թվականի հուլիսի 23-ի թիվ 04/545-2021 գրությամբ Թաթուլ Գրիգորյանը 2021 թվականի օգոստոսի 10-ին՝ ժամը 11:30-ին հրավիրվել է մասնակցելու նշված փաստերի առնչությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը: Պատշաճ ծանուցված Թաթուլ Գրիգորյանը նշված օրը և ժամին չի ներկայացել Հանձնաժողով:

1.5 2021 թվականի օգոստոսի 10-ին կազմվել է թիվ ՎԻՎ/15/2021 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.6 Հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 10-ի որոշմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/15/2021 գործի վարույթը: Վարույթային փաստաթղթերը, այդ թվում՝ վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին ծանուցումը, ուղարկվել են Թաթուլ Գրիգորյանին:

1.7 Վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Թաթուլ Գրիգորյանի բացակայությամբ 2021 թվականի սեպտեմբերի 2-ին՝ ժամը 11:00-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն: Թաթուլ Գրիգորյանի կողմից միջնորդություններ չեն ներկայացվել:

II.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/15/21 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի նախկին քննիչ Թաթուլ Հրանտի Գրիգորյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի տարեկան հայտարարագիրը չի ներկայացվել

Հանձնաժողով, ինչպես նաև 2020 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

III. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի նախկին քննիչ Թաթուլ Հրանտի Գրիգորյանը իր պաշտոնավարման ընթացքում «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

4.3 Մինչև 02.05.2020 թվականը գործող խմբագրությամբ Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մարտի 31-ը:

4.4 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդված 1-ին մասի (02.05.2020 թվականից (25.03.2020թ. ՀՕ-206-Ն օրենքի ուժի մեջ մտնելու ամսաթիվը) գործող խմբագրությամբ) համաձայն՝ Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտարարագրերը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետներում չներկայացնելը՝ առաջացնում է նախազգուշացում:

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) գործող խմբագրությամբ 169.28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա

չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.12 Օրենսգրքի 247-րդ հոդվածի հոդվածով սահմանված են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանքները, որի 7-րդ կետով սահմանված կարգավորման համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին նույն օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելու դեպքում:

4.13 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի ***գործող խմբագրությամբ*** 37-րդ հոդվածով սահմանված են վարչական տույժ նշանակելու ժամկետները, որի 7-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում (02.05.2020 թվականից (25.03.2020թ. ՀՕ-206-Ն օրենքի ուժի մեջ մտնելու ամսաթիվը) գործող խմբագրությամբ):

4.11 ***Մինչև 02.05.2020 թվականը գործող խմբագրությամբ*** «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

4.12 Օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Հաշվի առնելով իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածով սահմանված տարեկան հայտարարագրերը ներկայացնելու ժամկետը, սույն գործով քննարկվող Թաթուլ Գրիգորյանի կողմից 2019 թվականի տարեկան հայտարարագիրը չներկայացնելու խախտման կատարման պահից անցել է Օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործով վարչական տույժը նշանակելու ժամկետը:

Ինչ վերաբերում է Թաթուլ Գրիգորյանի կողմից 2020 թվականի պաշտոնական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիրը չներկայացնելու կապակցությամբ արձանագրված խախտմանը, վերոնշյալ իրավական նորմերի կարգավորումը կիրառելի չէ, հետևաբար, նշված խախտման մասով գործի վարույթը ենթակա չէ կարճման:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող, ինչպես նաև 33-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող որևէ հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թաթուլ Հրանտի Գրիգորյանի՝ 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու մասով գործի վարույթը կարճել:

2. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2020 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Թաթուլ Հրանտի Գրիգորյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ ***200 000 ՀՀ դրամի չափով:***

3. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Թաթուլ Հրանտի Գրիգորյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ (ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ)

ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ